

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/2

12 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Վան Արյան» ՍՊԸ 17.04.2015 թ-ի դիմումով բերված բողոքը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 10.04.2015 թ-ի թիվ 6106328 ակտի դեմ:

«Վան Արյան» ՍՊԸ-ի բողոքում բերված փաստարկները.

Սույն թվականի մարտի 26-ին ՀՀ Ֆինանսների նախարարության Արաբկիր ՀՏ աշխատակիցներ Արամ Դանիելյանն ու Կարեն Ջոհրաբյանը այցելել են «Վան Արյան» հրատարակչատուն և հրատարակչատան տնօրեն Վիլյամ Պողոսյանին հայտնել, որ եկել են կազմակերպությունում ստուգում իրականացնելու: Ներկայացնելով ստուգման հանձնարարագիրը՝ նրանք ասել են, որ Վիլյամ Պողոսյանը պետք է ստորագրի այն: Վերջինս, սակայն, ասել է, որ պետք է խորհրդակցի իր փաստաբանի հետ: ՀՏ աշխատակիցները հեռացել են:

Սույն թվականի մարտի 30-ին փոստային ծառայության միջոցով ստացվել է թիվ 6106328 հանձնարարագիրը, որով ՀՀ Ֆինանսների նախարարության Արաբկիր ՀՏ իրավաբանական և հարկադիր գանձումների բաժնի առաջատար մասնագետներ Արամ Դանիելյանին, Կարեն Ջոհրաբյանին, ընթացիկ հսկողության թիվ 2 բաժնի հարկային տեսուչ Կարինե Մարդոյանին հանձնարարվում է «Վան Արյան» ՍՊԸ-ում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասությունների սահմաններում իրականացնել հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Երկու օր անց, ապրիլի 1-ին կրկին փոստային ծառայության միջոցով ՀՀ ՖՆ Արաբկիր ՀՏ-ի կողմից ստացվել է թիվ 6106328 ակտի նախագիծը, որում Արամ Դանիելյանը, Կարեն Ջոհրաբյանը և Կարինե Մարդոյանը նշել են, որ իբր սույն թվականի մարտի 26-31-ն ընկած ժամանակահատվածում «Վան Արյան» ՍՊԸ-ում կատարել են հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում ընկերության տնօրեն Վիլյամ Պողոսյանի մասնակցությամբ:

Ենթադրյալ ստուգման արդյունքում պարզվել է, որ ստուգմանը նախորդող մեկ տարվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում չի արձանագրվել: Սակայն Արաբկիր ՀՏ վերոնշյալ աշխատակիցները՝ հիմք են ընդունել 17.03.2015 թ-ի թիվ 6207350 հանձնարարագրի հիման վրա, ենթադրյալ կատարված հսկիչ գնման արդյունքում կազմված թիվ 6207350 արձանագրությունը, որով, ըստ տեսչության աշխատակիցների՝ արձանագրվել է տնտեսվարող սուբյեկտի կողմից «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի պահանջի խախտում և առաջադրվել է տուգանք 300 հազար դրամի չափով:

Հարկ է հիշեցնել, որ «Վան Արյան» ՍՊԸ-ում վերոնշյալ աշխատակիցների կողմից հսկիչ գնում չի իրականացվել, ինչի մասին բողոքաբերը տեղեկացրել է 27.03.2015 թ-ի դիմումով: Ավելին, այդ դիմումով տեղեկացվել է, որ հիշյալ աշխատակիցների կողմից ներկայացված են կեղծ տեղեկություններ, և նրանց կողմից կատարվել են իրենց ծառայողական լիազորությունների վերազանցում, հետևաբար՝ զանցանք: Միննույն ժամանակ տեղեկացվում է, որ հատուկ քննչական ծառայություն ուղարկված նույնաբովանդակ դիմումը վերահասցեագրվել է Ֆինանսների նախարարություն, և հայցային աշխատանքների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Կ.Կարապետյանի կողմից իրականացվում է վարույթ, որին միացված է նաև Արաբկիր ՀՏ վերոհիշյալ

աշխատակիցների կողմից կազմված արձանագրության վարույթը, ընկերությունում իրենց գործողություններն իբր խոչընդոտելու վերաբերյալ: Ի դեպ, այդ վարույթի շրջանակներում տեղի է ունեցել 2 նիստ, 31.03.2015 թ-ին և 01.04.2015 թ-ին, ինչից հետո ընկերությունը չի ծանուցվել վարույթին մասնակցելու վերաբերյալ և առկա չեն տեղեկություններ, թե այն ինչ փուլում է:

Ինչ վերաբերում է մարտի 26-31-ը «Վան Արյան» ՍՊԸ-ում կատարված ենթադրյալ ստուգմանը, ապա պետք է նշել, որ ստուգում չի եղել, Արաբկիր ՀՏ վերը նշված անձինք ընկերություն չեն այցելել ոչ մի անգամ, ավելին՝ նման ստուգում չէր էլ կարող տեղի ունենալ՝ հետևյալ պատճառներով:

Համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ստուգման հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Վերջինս ստորագրում է մեկ օրինակի վրա հավաստելու համար, որ ծանուցված է ստուգման մասին:

Եթե նույնիսկ համարենք, որ մարտի 26-ին հարկային տեսչության աշխատակիցները պատշաճ կերպով ծանուցել են «Վան Արյան» ՍՊ ընկերության ղեկավարությանն իրականացվելիք ստուգման մասին, ապա ապրիլի 1-ից նոր կարող էր ստուգման իրականացման գործընթացը սկսվել: Սակայն ապրիլի 1-ին արդեն ստացվել է մարտի 31-ին կազմված վերոնշյալ ակտի նախագիծը:

Սույն թվականի ապրիլի 15-ին փոստով ստացվել է թիվ 6106328 ակտը, որն ունի նույն բովանդակությունը, ինչ վերոնշյալ ակտի նախագիծը: Ընկերությունը այն համարում է չպատճառաբանված և անհասկանալի է, թե ինչ փաստերի վրա հիմնվելով է կայացվել այն: Միևնույն ժամանակ, փոստով ստացված և՛ ակտի նախագծում և՛ բուն ակտում առկա է Արաբկիրի ՀՏ վերոհիշյալ աշխատակիցների պնդումը՝ ստորագրությամբ հաստատված այն մասին, որ իբր «Վան Արյան» ՍՊԸ ղեկավարությունը հրաժարվել է ստորագրել այդ փաստաթուղթը: Սա ակնհայտ կեղծիք է, քանի որ ընկերությունն այդ փաստաթղթերի գոյության մասին իմացել է միայն փոստով այն ստանալուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է քննել սույն բողոքը, չեղյալ համարել կայացված վարչական ակտը և ամբողջությամբ վերացնել այն, նաև օրենքով սահմանված կարգով կարգապահական վարույթ հարուցել Արաբկիրի ՀՏ վերոգրյալ անձանց նկատմամբ և համաձայն «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի ենթարկել վերջիններիս պատասխանատվության՝ ծառայողական լիազորությունները վերազանցելու հիմքով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վան Արյան» ՍՊԸ 17.04.2015 թ-ի դիմումով բերված բողոքը (այսուհետ նաև բողոք) քննության է առնվել Հանձնաժողովի նախորդ՝ 05.05.2015 թ-ի նիստում, որի ընթացքում որոշվել է բողոքի քննարկումը հետաձգել Հանձնաժողովի հաջորդ նիստ: Այսուհետև, «Վան Արյան» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) 07.05.2015 թ-ի գրությամբ խնդրել է տրամադրել Հանձնաժողովի 05.05.2015 թ-ի նիստի արձանագրությունը, Հանձնաժողովի կազմը, ինչպես նաև Հանձնաժողովի 05.05.2015 թ-ի նիստի հետաձգման պատճառ հանդիսացած հանգամանքի վերաբերյալ համապատասխան օրենսդրական հիմքերը: ՀՀ ֆինանսների

նախարարի տեղակալի 11.05.2015 թ-ի թիվ 11-1/11646-15 գրությամբ ընկերությանը տրամադրվել է պահանջված տեղեկատվությունը:

Բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ ընկերությունում հսկիչ գնում, ինչպես նաև ստուգում չի իրականացվել, հարկ է նշել հետևյալը:

Համաձայն ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 17.03.2014 թ-ի թիվ 6207350 հանձնարարագրի «Վան Արյան» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 19.03.2015 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6207350 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

հարկային տեսուչ Կարինե Մարդոյանի կողմից «Վան Արյան» ՍՊԸ-ին պատկանող ք.Երևան, Բաղրամյան 3 հասցեում գտնվող տպագրատանը 19.03.2015 թ-ին, ժամը 13:14-ին կատարել է հսկիչ գնում 10.000 դրամի չափով՝ կանխավճար այցեքարտ պատրաստելու համար, որի դիմաց վճարված կանխիկ գումարն Ավետ Պողոսյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց, քանի որ հաշվառված և տեղադրված չէր ՀԴՄ: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի և 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 26.03.2015 թ-ին հրապարակվել է թիվ 6106328 հանձնարարագիրը, որի համաձայն «Վան Արյան» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 10.04.2015 թ-ի թիվ 6106328 ստուգման ակտը (այսուհետ նաև Ակտ), որով վերոգրյալ խախտման համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ ս.թ. մարտի 26-ին ընկերությանը պատշաճ ծանուցվել է իրականացվելիք ստուգման մասին, հետևապես միայն ապրիլի 1-ից կարող էր սկսվել ստուգման գործընթացը, հարկ է նշել, որ դրանք հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ, պատշաճ ձևով (առձեռն կամ փոստով) ներկայացվում է տնտեսվարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ ... հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, ... ստուգումների»:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգումներ կատարելիս «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ հանձնարարագրի երկու օրինակը ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ ներկայացվելու պահանջը կիրառելի չէ:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն արձանագրեց այն փաստը, որ Ակտի 1-ին կետում պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքը սխալ է նշված, ինչն իր հերթին հանգեցրել է սխալ պատասխանատվության կիրառմանը:

Այսպես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վան Արյան» ՍՊԸ-ի 2013 թ-ի արդյունքներով իրացումից հասույթը կազմել է 18.923 հազ. դրամ, հետևաբար ՀՀ կառավարության 05.08.2013 թ-ի N 968-Ն որոշման համաձայն, ընկերությունը 2014 թ-ի հոկտեմբերի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում կանխիկ դրամական հաշվարկներ կատարելու դեպքում պետք է կիրառեր նոր սերնդի ՀԴՄ, իսկ այն չկիրառելու համար պատասխանատվությունը սահմանված է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով: Մասնավորապես, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելու համար կազմակերպությունը կամ անհատը ձեռնարկատերը նախազգուշացվում է»:

Քննարկվող դեպքում Ակտի 1-ին կետում պատասխանատվության կիրառման համապատասխան իրավական հիմքը նշվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը և կիրառվել է վերջինով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ, այն դեպքում, երբ պետք է նշվեր նույն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը, որով ընդամենը նախատեսված է նախազգուշացում:

Ինչ վերաբերվում է բողոքով բերված միջնորդությանը՝ Ակտը կազմած անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, ապա նշվեց, որ վերոգրյալ խախտման համար սահմանված կարգով կհարուցվի վարույթ՝ իրենց պարտականություններում թերացած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

1. ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ 10.04.2015 թ-ի թիվ 6106328 ակտի 1-ին կետից նվազեցնել «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն առաջադրված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

2. Միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարին Ակտը կազմած պաշտոնատար անձանց նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ